

11569

ՈՒՍԹՈՂԿՈՄԱՏ—ԴԳՐՈՑԱԿԱՆ ՎՊՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ Ծ Ր Ա Գ Ի Ր

ՏԱՐՐԱԿԱՆ ՑԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴԳՐՈՑԻ ՀԱՄԱՐ

Քաղաքված է ՀՍԽՀ Լուստղիկունաթի կողմից վորպես ժամանակա-
վոր II կիսամյակի համար

3(07)

2-38

ԼՈՒՍՄԱՐԲԶՐԱՏ

1935

Ց Ե Ր Ե Վ Ա Ն



3(07)
2-38 ԱԿ

ԲՈԼՈՐ ԼՈՒՍԲԱԺՎԱՐՆԵՐԻՆ

Հասարակագիտության դասավանդումը պետք է սկսել տվյալ ծրագիրը ստանալուց պես: Այդ առարկան անցնելու համար տարրական դպրոցում հասկանցված է 20 ժամ, իսկ միջնակարգ դպրոցում՝ 24 ժամ:

Ծրագիրը ժամանակավոր է. նշված գրականությունը տրվում է միայն միջնակարգ դպրոցների դասատուների համար: Գոյություն ունեցող դասագրքերը չեն հանձնարարվում մի շարք սխալների պատճառով:

Միայն 7-րդ դասարանում Մարքսի, Ենգելսի, Լենինի և Ստալինի կենսագրություններն անցնելիս թույլատրվում է աշակերտներին ոգտվելու դասագրքերի համապատասխան մասերից: Ովսիանիկովա, Լեվիտան, հասարակագիտության 3-րդ մաս. 1933 թ. 1-ին գլուխ. Մարքս և Ենգելս— պար. 2, 4, 13, 16, 17. 2-րդ գլուխ. Լենին—պար. 21, 24, 3-րդ գլուխ. Ստալին— պար. 41: Մնացած դասարաններում դասատուն ոգտագործում է ծրագրում նշված գրականությունը, 17-րդ կուսեամագումարի, ԽՍՀՄ-ի խորհուրդների 8-րդ համագումարի, Անդրկովկասի 7-րդ և Հայաստանի 8-րդ համագումարի ընթացիկ մամուլը:

Նյութը պետք է մատչելի ձևով մատնանշված առարկայի միջոցով պատկերացումը տա աշակերտին: Նկատի առնելով շտապողականությունը, ծրագիրը չի թարգրմանված թուրքերեն, ֆրդերեն և ռուսերեն լեզուներով:

Խնդրում ենք լուսբաններին ձեռք առնել իրենցից կախված բոլոր միջոցներն՝ ապահովելու հասարակագիտության ավանդումը ազգային փոքրամասնությունների դպրոցներում:

Հուստոզկոմի տեղակալ և
Դպրոցական վարչ. պետ՝ Ս. ՇԱՀՎԵՐԴՈՎԱ

Программа обществовед. для начальной и средн. школы
Наркомпрос ССРА 1935 Эривань

1008 3 9 26
34860

ՅՈՒՑՄՈՒՆՔ—ՏԱՐՐԱԿԱՆ ՅԵՎ ՎՈՉ ԼՐԻՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ
ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

1934—35 ուսումնական տարում հասարակագիտության
դասավանդման մասին

Տարրական և վոչ լրիվ միջնակարգ դպրոցների հասարակագիտութեան յեղած ծրագրերը և դասագրքերը ծանրաբեռնված են մարքս-լենինյան տեսութեան և հոլոսակցութեան քաղաքականութեան բնազավառից յերեխաների համար անմատչելի, չոր, սխեմատիկ և վերացական նյութերով:

Տարրական և վոչ լրիվ միջնակարգ դպրոցներում հասարակագիտութեան դասավանդման դրվածքը բարելավելու նպատակով դասատուները պետք է առաջնորդվեն հետևյալով՝

Առաջին և յերկրորդ դասարաններում հասարակագիտութեան դասավանդման համար ուսումնական պլանում հատուկ ժամեր չի տրվում: Առաջին և յերկրորդ դասարաններում հասարակագիտութեանը պետք է անցկացնել այն նյութերի վրա, վորոնք զետեղված են այդ դասարանների դասագրքերում: Առաջին և յերկրորդ դասարաններում հասարակագիտութեան նյութն անցնելու ժամանակ անհրաժեշտ է հատուկ ուշադրութեան դարձնել այնպիսի հեղափոխական անցքերի վրա, ինչպիսիք են որինակ՝ Հոկտեմբերյան հեղափոխութեանը, Կարմիր բանակի որը, Մայիսի 1-ը և այլն:

Առաջին և յերկրորդ դասարաններում, վորպես հասարակագիտական նյութ անհրաժեշտ է ոգտագործել դասագրքից հետևյալ հատվածները:

Առաջին դասարան.— Հ. Հայրապետյանի *Կազմած ընթերցարանից՝ «Բրիգադիբ», «Սոցմբցում», «Լենին պապին», «Լենինի հետ», «Հունվարի 21-ին», «Ժամի 4-ին», «Կառուցողներ», «Մեր շինարարությունը», «Վնասարարը», «Ծեր բանվորը», «Անհաղթ բանակը», «Շչակի յերգը», «Ծառատունկ», «Առաջին ահուսի տոն», «Մանկական հրապարակը», «Վլադիմիր Լենին», «ԽոսիՖ Ստալին»:*

Յերկրորդ դասարան. Մ. Գուրգարյանի *Կազմած գրքից.— «Հոկտեմբերիկին», «Մեր Լենինը», «Իլյիչի մանկությունը», «Գաշտերում», «Գիքորի գրքերը», «Հոկտեմբեր», «Նազե», «Տրամվայ», «Պղնձի հանքերում», «Հին դպրոցը», «Գործարանում», «Լենինը», «1924 թ. հունվարի 21-ը», «Վլադիմիր Իլյիչի հետ սանատորիայում», «Բանտում», «Վլադիմիր Իլյիչ Լենին», «Բարիկադի վրա», «Մայիսյան յերգ», «Մայիսի 1-ն անցյալում», «Փոքրիկ հեղափոխականը», «Սովորում են պաշտպանել յերկիրը», «Կռիվ գետի հետ», «Վերադարձ», «Բազուն անցյալում», «Բազուն այժմ», «Տեքրասիլում», «Կանաչ քաղաքը», «ԽոսիՖ Վխատարիոնովիչ Ստալին», «Ինտերնացիոնալ»:*

Բացի դասագրքերից դասատուն առաջին և յերկրորդ դասարանում պետք է ոգտազործի նաև «Պիոներ Կանչից», «Պիոներ Ղեկից», «Հոկտեմբերիկից», «Ավանդարդից» և մանկական ընթերցանության գրքերից մանուկների համար մատչելի նյութեր:

Յերրորդ և չորրորդ դասարաններում հասարակագիտության նյութ իր մեջ պետք է ընդգրկի դպրոցականի և պիոների հասարակական ու անհատական վարքի խնդիրները: Այդ հիման վրա 3-րդ և 4-րդ դասարաններում դպրոցականներին պետք է տալ հասարակական և քաղաքական հարցերից տարրական տեղեկություններ այն չափով, առանց վորի այդ դասարանների տնայնիւրները չեն կարող ըմբռնել (իրենց տարիքին համապատասխան), այն բոլորը, ինչ վոր տեսնում են

Նրանք իրենց շրջապատում, և վորին մասնակցում են անմիջապես:

Այդ գիտելիքները յերեխաներին պետք է հաղորդվի միանգամայն հասկանալի և գեղարվեստական դունեղ նյութերի վրա:

III ԴԱՍԱՐԱՆ

1934/35 ուս. տարում 3-րդ դասարանի համար սահմանվում է հետևյալ թեմատիկան

1.— Յերեխաները խորհրդային յերկրում պետք է լավ սովորեն և լավ աշխատեն (սեր դեպի դպրոցը, ուսուցիչը, հարգանք նրա մանկավարժական աշխատանքին):

2.— Լավ է լինել առողջ և համարձակ:

3.— Մաքրությունը, մաքրասիրությունը և ճշտապահությունը առողջության, լավ աշխատանքի, կուլտուրական հանգնտի դրավականն է:

4.— Խորհրդային Միության մեջ յերեխաները համեստ են, քաղաքավարի յեն, լավ են վերաբերվում դեպի ընկերները և հարգում են հասակավոր աշխատավորներին, վորոնք նոր կյանք են կառուցում:

5.— Պիոներները և դպրոցականներն ազնիվ են, արդարամիտ են և ճշմարտախոս: Նրանք պաշտպանում են հասարակական սեփականությունը:

6.— Խորհրդային յերկրի յերեխաները սիրում են իրենց հայրենիքը:

Այս թեմաների մոտավոր բովանդակությունը նախատեսնվում է հետևյալը:

1-ին ԹԵՄԱ.— Խորհրդային յերկրում յերեխաները պետք է լավ սովորեն և լավ աշխատեն (1—3 դաս):

1-ին դաս.— Յարական թուստատանում ազգարնակչության $\frac{3}{4}$ -ից ավելին անդրադետ եր: Հայաստանում բնակչության $\frac{77}{100}$ անդրադետ եր. անդրադետներին հեշտ եր շահագործել: Աշխատավորների յերեխաները

կարող եյին միայն սովորել առաջին դասարանում, բայց առաջին դասարանն էլ ավարտում եյին շատ քչերը: Հին դպրոցում սովորելը շատ ձանձրալի յեր և ծանր: Յերեխաներին հաճախ պատժում եյին (թվել մի քանի կենդանի որինակներ): Միջնակարգ դպրոցներ, համալսարաններ ցարական Ռուսաստանում գոյութուն ունեյին միմիայն հարուստների համար: Խորհրդային իշխանութունը կառուցել է բազմաթիվ դպրոցներ, տեխնիկումներ, բարձրագույն ուսումնական հիմնարկներ, վորտեղ սովորում են աշխատավորների յերեխաները: Հայաստանում մասսայական դպրոցներում սովորում են 240.000 աշակերտ:

Խորհրդային յերկրում բոլոր մանուկները պետք է սովորեն: Մեզ մոտ անց է կացված ընդհանուր պարտադիր ուսուցում: Յուցմունք այն մասին, վոր բոլոր մանուկները մեզ մոտ պետք է սովորեն տվել է ընկ. Ստալինը:

2-րդ դաս.— Կապիտալիստական յերկրներում մանուկները ստիպված են դեռ վաղ հասակից զբաղվել ծանր աշխատանքով, վորպեսզի մի կտոր հաց աշխատեն: Խորհրդային յերկրում մանուկների գլխավոր աշխատանքը սովորելն է: Լենինը շատ լավ եր սովորում (կարգալ և պատմել պատմվածքներ փոքրիկ Վալդիայի մասին), նա դպրոցում ուշադրությամբ լսում եր ուսուցիչներին միշտ սովորում եր դասը: Պետք է լինել Լենինի պես:

3-րդ դաս.— Խորհրդային Միության մեջ կառուցվում է նոր կյանք: Յերկրին հարկավոր են գրագետ, զարգացած և կուլտուրական մարդիկ: Մեզ մոտ գրագետները կազմում են ազգաբնակչության 94 0/0-ը: Պետք է տիրապետել գիտությանը և կարողանալ կյանքում կիրառել: Պետք է ջանասեր լինել, սովորել, շատ կարգալ և ստեղծագործող լինել: Գյուտարար դպրոցականներ: Աշխատանք մանկական տեխնիկական կայան-

ներում: Աշխատանք պոլիտեխնիկ արհեստանոցներում և այլն:

Առանց կարգապահության չի կարող լինել լավ ուսում: Պետք է ճշտորեն կատարել դպրոցում սահմանված կանոնները (պատմվածքներ և հոգվածներ կարգալ լավագույն կարգապահ դպրոցականների մասին): Լավ դպրոցականը բաց չի թողնում վոչ մի դաս: Նա միշտ բարեխղճորեն սովորում է իր դասը և կատարում է հանձնարարված այլ աշխատանքներ: Դպրոցականը հարգում է ուրիշի աշխատանքը ինչպես որինակ՝ ուսուցչի, հավաքարարի, պահակի, իր ընկերների և այլն:

Ուսման մեջ նա մրցակցում է ընկերների հետ աշխատելով ավելի լավ կատարել իրեն հանձնարարած աշխատանքը: Դպրոցականը պետք է ոգնության դա իր ընկերներին, յեթե այդ ոգնությունը նրանց հարկավոր է: Դպրոցականը խուլիզանության թշնամին է: Նա պայքարում է բոլոր նրանց դեմ, ովքեր խանդարում են կարգապահությունը և դպրոցական կանոնները:

2-րդ թեՄԱ.— Լավ է լինել առողջ և համարձակ (4—6 դաս)

4-րդ դաս.— Յարական իշխանությունն աշխատավորների առողջության համար չեր մտածում: Հիվանդանոցներ և բուժարաններ չափազանց քիչ եյին: Կայն ծավալ ե ստանում Փալչիությունը, հեքիմությունը, թոռլթ բացումը և այլն: Առողջությունը կենսունակության և համարձակության նախադրյալն է: Խորհուրդների յերկրում աշխատավորների համար կառուցված են շատ հիվանդանոցներ, բուժարաններ, կուրորաներ և հանգստյան տներ: Աշխատավորների կուլտուրական հանդիստը կազմակերպելու համար շատ վայրեր կան, ինչպես՝ որինակ՝ ախումբներ, թատրոններ, կինոններ, կուլտուրայի տներ, կուլտուրայի և հանգստի պարկեր: Պետք է հետևել ինչպես իր առողջության,

նույնպէս և ընկերոջ առողջութեան վրա: Դպրոցականը աշխատում է իրենց փողոցի կանաչազարդման համար:

5-րդ դաս.— Խորհրդային դպրոցականը պետք է լինի տոկոս, համառ և համարձակ: Նա սկսած գործը հասցնում է իր վախճանին: Նա չի վախենում վտանգից, չի յերկչում, չի ընկճւում:

Յերկրին հարկավոր են անվեհեր և համարձակ մարդիկ: (Յուլյո տալ թե ինչպէս քաղաքացիական կրօնի վնասում համարձակութունը և անվեհերութունը վնասում է ինչ հաղթանակը. չեւոտակինյաններ. հերոս ոգաչուններ):

6-րդ դաս.— Ֆիզիկուլտուրան և սպորտը մանուկներին առողջացնում են: Ֆիզիկուլտուրան և սպորտը զարգացնում են համարձակութունը, ուժը և ունակութունը: Ցարական կարգերի ժամանակ աշխատավորների մեջ բոլորովին զարգացած չէին Ֆիզիկուլտուրայի զարգացումը և սպորտը:

Խորհրդային յերկրում կան մեծ մարզադաշտեր, սպորտ խաղերի հրապարակներ, լողի դպրոցներ և այլն: Մոսկվայում տեղի ունեցած Ֆիզիկուլտուրնիկների զորատեսը անմոռանալի տեսարան էր: (Թերթերից վերցնել զորատեսի նկարագրութունները): Խորհրդային տուրիստներ: Ուզում ես լինել առողջ և համարձակ՝ զբաղվիր Ֆիզիկուլտուրայով և սպորտով:

Խորհրդային դպրոցականը գիտե գվարձանալ: Դպրոցում, փողոցում և ամենուրեք դպրոցականը կազմակերպում է մանուկների ժամանցը:

3-րդ ԹԵՄԱ.— Մաքրութունը, մաքրասիրութունը և ճշտապահութունը առողջութեան, լավ աշխատանքի, և կուլտուրական ՀԱՆԳՍՏԻ ԳՐԱՎԱԿԱՆՆ Ե (7-9 ժամ)

7-րդ դաս.— Առաջ բանվորները ապրում էին խոնավ նկուղներում. քաղաքների կենտրոններում աղբում էին կապիտալիստները, իսկ ծայրամասերում

աղտոտաբարվում էին բանվորները: Բանվորների բնակարանները գտնվում էին հակասանիտարական պայմաններում: Կեղտը և անմաքրութունը քայքայում են մարդու առողջութունը և իջեցնում նրա աշխատունակութունը: Խորհրդային իշխանութունը փոխեց բանվորների և նրանց յերեխաների կյանքի պայմանները: Այն տներում վրտեղ առաջ ապրում էին կապիտալիստները, այժմ ապրում են բանվորները: Բանվորների համար կառուցվում են նոր, լավ և լուսավոր տներ: Դյուղում բարեխալիում է կոլտնտեսականների կյանքը: Խորհրդային իշխանութունը պայքարում է բանվորների և կոլտնտեսականների կուլտուրական կյանքի համար: (Տալ յերեխաներ ՀՍՍՀ խորհուրդների VIII և հարվածային կոլտնտեսականների II համադումարներում բանվորների և կոլտնտեսականների ունեցած յեւլոյթներից):

8-րդ դաս.— Ճշտապահութունը աշխատանքի մեջ տնտեսում է ժամանակը և ուժը: Մաքուր գործարաններում ու Ֆարրիկաներում, մաքուր հիմնարկներում լավ է ու հեշտ աշխատելը: Մաքուր բնակարաններում աշխատելն ու հանգստանալը հաճելի յե: Մաքուր դըպրոցում հեշտ է սովորելը: Յուրաքանչյուր իր և գործիք պետք է ունենա իր տեղը: Պետք է իմանալ և ճշտորեն կատարել սանիտարական կանոնները: (Սանիտարական միջոցները գրել աշակերտների տետրակներում):

Դպրոցականն ամեն տեղ թե տանը և թե դպրոցում պետք է լինի մաքուր, վայելուչ, ճշտապահ և կարգապահ: Չգետուր, գրքերը, տետրակները, սեղանը, նրտուրանները և այլն պետք է միշտ պահպանվեն մաքուր և կարգին:

4-րդ ԹԵՄԱ.— Խորհրդային յերկրի մանուկները կիրք են, լավ են վերաբերվում դեպի ընկերները և հարգում են Յոս կյանք կառուցող հասակավոր աշխատավորներին (9-10 դաս)

9-րդ դաս.— Դիտակից և ակտիվ կերպով սոցիա-

լիստական հասարակարգ կառուցողները կուլտուրա-
կան մարդիկ են: Կուլտուրական մարդկանց համար
հայհոյանքը և կոպտութիւնը ստար է:

Խորհրդային դպրոցականը պետք է լինի քաղաք-
վարի թե ընկերների և թե հասակավորների նկատ-
մամբ: Նա համեստ է, պարծենկոտ չէ, հպարտ չէ, ամ-
բարտավան չէ: Քաղաքավարութիւնը և համեստու-
թիւնը պետք է սովորել Լենինից, Ստալինից (պատմել
և կարգալ առանձին կտորներ Լենինի մասին յեղած
հիշողութիւններէից): Դպրոցականը հարգում է իր
ծնողներին, վորոնք դպրոցի հետ միասին պայքարում
են կոմունիստական դաստիարակութեան համար: Պատ-
մելածքներ Լենինի կյանքից թե ինչպես նա սիրում էր
իր մորը, ջուլերին և յեղբայրներին:

10-րդ դաս.— Քննադատութիւնը և ինքնաքննա-
դատութիւնը պայքարի զենք է լավ աշխատանքի հա-
մար: Խորհրդային դպրոցականը համարձակորեն քննա-
դատում է ընկերների սխալները: Նա չնորհակալու-
թեամբ ընդունում է նաև իր սխալների ճիշտ քննադա-
տութիւնը ընկերների կողմից կատարված: Խորհրդա-
յին դպրոցականը լավ ընկեր է: Նա յերբեք իր ընկերո-
ջը չի թողնի դժբախտութեան կամ վտանգի դեպքում:
Նա չի վիրավորում թույլերին և փոքրերին, այդ հոգա-
տար վերարբերմունք է ցույց տալիս դեպի նրանց:

5-րդ ԹԵՄԱ.— Պիոներները և դպրոցականները ազ-
նիլ են և ճշմարտախոս: Նրանք խնամում են սոցիա-
լիստական սեփականութիւնը (11—14 դաս)

11-րդ դաս.— Սուտը, բամբասանքը և գողութիւ-
նը հին կարգերի մնացորդներ են: Կապիտալիստները ի-
րենց իշխանութիւնն են հաստատում աշխատավորներին
խարելով: Կապիտալիստական հասարակարգում կյան-
քը հաճախ ստիպում է մարդկանց ասել անձնութիւն,
կատարել գողութիւն և այլն: Պետք է վրէժնացնել կա-

պիտալիստական հասարակարգից մնացած այս ժա-
ռանգութիւնը:

12-րդ դաս.— Ազնվութիւնը և ճշմարտասիրու-
թիւնը պետք է սովորել մեր առաջնորդներից՝ Մարք-
սից, Ենգելսից, Լենինից, Ստալինից: Կոմունիստները
միշտ պայքարել են ճշմարտութեան համար: Կոմու-
նիստները բացարձակորեն և համարձակ կերպով աշ-
խատավորների առաջ մերկացնում էին կապիտալիստ-
ների, կալվածատերերի ամբողջ սուտը: Դրա համար
կոմունիստներին բանտ էին նստեցնում, տաժանակիր
աշխատանքի էին ուղարկում, կախում և գնդակահարում
էին: Բերել որինակներ Լենինի, Ստալինի, Թեյմանի,
Դիմիտրովի և այլ հեղափոխականների կյանքից: Հե-
ղափոխականները ճշմարտութեան համար մարտնչոյ
ներ են: Իզուր չէ, վոր բոլշևիկները թերթն էլ է կոչ-
վում «Պրավդա» («Ճշմարտութիւն»): Խորհրդային
դպրոցականը պատրաստվում է լինել հեղափոխական:
Նա ճշմարտասեր և ազնիւ է: Նա չի ստում, չի բամ-
բասում, միշտ ասում է ճշմարտութիւնը:

13-րդ դաս.— Խորհրդային յերկրում գործարան-
ները, Փարբիկաները, յերկաթուղիները պատկանում են
աշխատավորներին, հանդիսանում են սոցիալիստական
սեփականութիւն: Սոցիալիստական սեփականութեան
պահպանումը բարելավում է բանվորների և գյուղացի-
ների կյանքը: Պետք է աչքի լույսի պես պաշտպանել
սոցիալիստական սեփականութիւնը:

Դասակարգային թշնամիները, կուլակները, վնա-
սարարները սողոսկում են գործարանները, Փարբիկա-
ները, յերկաթուղիները, կոլտնտեսութիւնները, խորհ-
տնտեսութիւնները, կոոպերատիվները և ամեն կերպ
աշխատում են վնասել և խժռել սոցիալիստական սեփա-
կանութիւնը: Դպրոցականը պետք է դիմակազերծ անի
խորհուրդների թշնամիներին: (Տալ դասակարգային
թշնամիների դեմ յերեխաների վարած պայքարից ա-
ռանձին պատկերներ: Ֆարբիկաներում, գործարաննե-

բում, տրանսպորտում և այլ վայրերում դասակարգա-
յին թշնամուն դիմակադերձ անելու դեպքեր և այլն:
Որինակ՝ Պավլիկ Մորոզով և ուրիշներ): Բանվորների
և կոլտնտեսականների շարքերում ել դեռ կան դասա-
կարգային թշնամուն ոգնող մարդիկ— պարապուրդ
ավուղներ, լողերներ և գողեր: Պետք է պայքարել նրանց
դեմ (տալ յերեխաների կողմից կոլտնտեսական բերքի
պաշտպանման որինակներ և այլն):

14-րդ դաս.— Դպրոցականները պետք է խնամքով
վերաբերվեն դպրոցական դուլքին: Նրանք պահպանում
են նստարանները, քարտեզները, գրատախտակը, գրք-
քերը և այլն: Նրանք խնամքով են վերաբերվում ինչ-
պես իրենց, նույնպես և ընկերների իրերին:

6-րդ ԹԵՄԱ.— Խորհրդային յերկրում մանուկ-
ները սիրում են իրենց հայրենիքը (15—22 դաս):

15-րդ դաս.— Մեր հայրենիքը բռնում է աշխարհի
մեկ վեցերորդ մասը: Աշխարհում նա միակ յերկիրն է,
վորտեղ իշխանութունը պատկանում է բանվորներին և
գյուղացիներին: Բանվորները և գյուղացիները հրացա-
նը ձեռքներին նվաճել են իրենց իշխանութունը:

16 և 17-րդ դասեր.— 18 տարի բանվորները
և գյուղացիները մեր յերկրում կառուցում են իրենց
սոցիալիստական հայրենիքը: Խորհուրդների յերկրում
կառուցվում են գործարաններ, Փարբիկաներ, էլեկ-
տրոկայաններ, անց են կացվում նոր յերկաթգծեր,
ջրանցքներ (պատմել յերեխաներին մեր նորակառույց
գիգանտների մասին, ինչպես որինակ տրակտորային
գործարանների, ավտոմեքենաների գործարանների,
Թուրքսիրի, Դնեպրոգեսի, Սպիտակ և Բալթիկ ծո-
վերի ջրանցքի, Քանաքեռգեսի, Չորագեսի, Ռիոնգեսի,
Կաուչուկի, Քիմկոմբինատի և այլ շինարարությունների
մասին): Նոր ձևով վերակառուցվում է գյուղը. կազմա-
կերպված են կոլտնտեսություններ, խորհատնեսու-
թյուններ, մեքենատրակտորային կայաններ և այլն:

Պյուզ և ուղարկված մեծ քանակությամբ գյուղատնտե-
սական մեքենաներ, տրակտորներ: Բանվորների և գյու-
ղացիների կյանքը տարեց տարի ավելի յե բարելավ-
վում: (Բերել որինակներ ՀՍԽՀ Խորհուրդների 8-րդ
համագումարի պատգամավորների յելույթներից և
հարվածային կոլտնտեսականների II համագումարի
յելույթներից): 2-րդ հնգամյակում ԽՍՀՄ-ում կա-
ռուցվելու յեն շատ գործարաններ, Փարբիկաներ, բոլոր
գյուղացիները կդառնան կոլտնտեսականներ: 2-րդ հըն-
գամյակի վերջին բոլոր բանվորները և գյուղացիները
պետք է ապրեն ունևոր և կուլտուրական կյանքով:
Բանվորները և գյուղացիները սիրում են իրենց հայրե-
նիքը և իրենց ամբողջ ուժերը նվիրում են խորհրդա-
յին յերկրի բարգավաճմանը:

18-րդ դաս.— Ամբողջ աշխարհի աշխատավորնե-
րը ջերմորեն սիրում են Խորհուրդների յերկիրը, ԽՍՀՄ
ամբողջ աշխարհի աշխատավորների հայրենիքն է: Մեր
յերկրի որինակով կապիտալիստական յերկրների բան-
վորներն ու գյուղացիները սովորում են թե ինչպես
պետք է պայքարել իրենց շահագործողների՝ կապիտա-
լիստների և կալվածատերերի դեմ:

19-րդ դաս.— Կապիտալիստները և կալվածատե-
րերը առում են Խորհուրդների յերկիրը՝ ամբողջ աշխար-
հի աշխատավորների հայրենիքը: Նրանք պատերազմ են
պատրաստում ԽՍՀՄ-ի դեմ: Մենք պատերազմ չենք
ցանկանում, բայց մենք ամրապնդում ենք Կարմիր բա-
նակը, վորպեսզի պատրաստ լինենք պաշտպանվելու:
Մեր բանակը լավ սպառազինված է: Խորհրդային իշ-
խանութունը հողատար վերաբերմունք ունի դեպի
Կարմիր բանակի մարտիկները: Ընկ. Ստալինը Կարմիր
բանակի լավագույն ընկերն է: Կլիմենտի Յեֆրեմո-
վիչ Վորոշիլով: Մեր կարմիր բանակայինները սիրում են
իրենց հայրենիքը: Նրանք պատրաստ են հարկ յեղած
դեպքում հակահարված տալ թշնամուն:

20-րդ դաս.— Խորհրդային Միությունը պաշտպա-

հերու համար Կարմիր բանակի հետ պատրաստվում են միլիոնավոր աշխատավորներ: Յերկրի պաշտպանութան շքանշանով պարգևատրվողները, Վորոշիլովյան հրաձիգները, Պաշը-Ավիաքիմի սանիտարական խմբակները, ողաչունները, պարաշյուտիստները, պլաներիստները: Խորհուրդների յերկրի աշխատավորների միակ հայրենիքի պաշտպանութան համար պատրաստ են կապիտալիստական յերկրների հեղափոխական բանվորները և գյուղացիները:

21-րդ դաս. — Բուրժուական վոչ մի յերկրում իշխանությունը այնպես չի հոգում յերեխաների համար ինչպես հոգում է խորհրդային իշխանությունը: Խորհրդային յերկրում յերեխաները սիրում են իրենց հայրենիքը:

22-րդ և 23-րդ դասեր. — Անցածի կրկնություն:

Գոյություն ունեցող զասագրքերում թված թեմաները անցներու համար, բացակայում է համապատասխան նյութ, ուստի դասատուները պետք է համապատասխան նյութեր գտնեն ՀՍՍՀ-ի խորհուրդների VIII համագումարի, խորհուրդների համամիութենական VII համագումարի և հարվածային կոլտնտեսականների II համագումարի զեկուցումներից ու յերույթներից: Կարելի յե նյութեր վերցնել թերթերի հոդվածներից, դանազան պատմվածքներից, բանաստեղծություններից. դասատուները առատ նյութ կգտնեն «Պիոներական Պրավդայում», «Պիոներ Կանչում», «Ավանգարդում», «Հոկտեմբերիկում» և այլն: Բացի դրանից դասատուն կարող է համապատասխան նյութեր վերցնել հենց իրենց շրջապատից, դպրոցից, կոլտնտեսությունից, խորհանտեսությունից, գործարանից, շրջանային լրագրերից և այլն:

IV ԴԱՍԱՐԱՆ

4-րդ դասարանի համար 34—35 ուսումնական տարում սահմանվում է հետևյալ բեմատիկան:

1. Վորպեսդի կառուցել՝ պետք է գիտենալ, վորպեսդի գիտենալ պետք է սովորել:
2. Պաշտպանի սոցիալիստական սեփականությունը:
3. Պատրաստվիր քո հայրենիքի պաշտպանության համար:
4. Խորհրդային յերկրի մանուկները ամբողջ աշխարհի, բոլոր ազգությունների աշխատավորների մանուկների յեղբայրներն են:
5. Բանվոր դասակարգի գործի համար մարանչոդ յերեք սերունդ կոմունիստներ, կոմյերիտականներ և յրիտներ:
6. Խորհրդային յերկրի մանուկները նվիրված են Լենինի-Ստալինի գործին: Այս թեմաների մոտավոր բովանդակությունը (ըստ դասերի) նախատեսանվում է հետևյալ կերպ.

1-ին թեմա. — Վարպեսդի կառուցել պետք է գիտենալ, վորպեսդի գիտենալ պետք է սովորել (1—3 դաս)

1-ին դաս. — Ուսումը լույս է, իսկ անգրագիտությունը խավար. Լենինը կտակել է «սովորել, սովորել և սովորել». այս թեման ուսուցիչը պետք է կոնկրետ փաստական նյութի վրա պատկերավոր պատմի աշակերտներին: Անհրաժեշտ է կարդալ հատվածներ գեղարվեստական գրականությունից և այլն:

2-րդ դաս. — Յարի ժամանակ բանվորներին և գյուղացիներին պահում էյին մթության և իտվարի մեջ: Ուսումը նրանց համար անմատչելի յեր դարձվում, վորովհետև անգրագետներին և կիսագրագետներին հեշտեր շահագործել ու ճնշել: Յարական Ռուսաստանում դպրոցների վրա ծախսվում էր չնչին կողակներ: Կապի-

1008 3076 9763 09846 8001 34860



տալիստական յերկրներում դպրոցն ամեն կերպ աշխատում է բանվորների և գյուղացիների մանուկներին դարձնել իր սարուկները: Յերեխաներին ներչնչում են, վոր նրանց ամենավտանգավոր թշնամին դա կոմունիստներն են: Կապիտալիստներն ամեն կերպ աշխատում են մանուկների գլուխները լցնել ամեն տեսակ անճշտություններով: Դասագրքերում, վորոնք կազմված են մանուկների համար, գրված է, վոր մանուկները պետք է հավատան աստծուն, հարգեն և լսեն հարուստներին: Կապիտալիստները չեն ուզում վորպեսզի յերեխաները մեծանան դառնան հեղափոխականներ ու կոմունիստներ:

Մեր խորհրդային հայրենիքում տարեց-տարի ավելի ու ավելի շատ է դումարներ ծախսվում աշխատավորների լուսավորության գործի վրա: ԽՍՀՄ-ում անց է կացված ընդհանուր պարտադիր ուսում, իսկ քաղաքներում, Փարբիկա-գործարանային վայրերում յոթնամյա պարտադիր ուսում: Մեր յերկրում ընդհանուր պարտադիր ուսում անցկացնելու ցուցմունքները ավել է 1930 թ. Համկոմկուսի 16-րդ համագումարում ամբողջ աշխատավորների ղեկավար ընկ. Ստալինը:

Մեզ մոտ սովորում են վոչ միայն մանուկները, այլև հասակավորները: Խորհուրդների յերկիրը դառնում է համատարած գրագիտության յերկիր: Խորհրդային Միության կոմյերիտականներն իրենց վրա պարտավորություն են վերցրել յերկրորդ հնգամյակի վերջում ձեռք բերել միջնակարգ կրթություն: Բանվորները և գյուղացիները ԽՍՀՄ-ում տիրապետելով գիտությանը նոր ձևով են վերակառուցում կյանքը: Մենք ինքներս ենք կառուցում Փարբիկաներ, գործարաններ, յերկաթուղիներ, մեքենաներ, հաստոցներ, այերոպլաններ և այլն: Մենք շատ ունենք լավ ճարտարապետներ, տեխնիկներ, պրոֆեսորներ, ուսուցիչներ, գյուտարարներ և այլն: ԽՍՀՄ-ում աճում է տեխնիկումների, միջնակարգ դպրոցների և ԲՈՒՀ-երի ցանցը, վորտեղ սովորում է մեր յերիտասարդությունը:

Խորհրդային դպրոցն այն չի ինչ կապիտալիստական դպրոցն է: Խորհրդային իշխանությունը պահանջում է դպրոցից, վորպեսզի դպրոցը մանուկներին տա ավելի շատ գիտություն, վորպեսզի նա դաստիարակի նրանցից սոցիալիստական հաղթարակարգի լավագույն կառուցողներ:

3-րդ դաս.— Առանց գրագիտության չի կարելի տիրապետել տեխնիկան և սոցիալիստական հասարակարգի գիտակից ու ակտիվ կառուցող դառնալ: Խորհրդային մանուկները պետք է համառ կերպով սովորեն, վորպեսզի դառնան բազմակողմանի զարգացած և կուլտուրական մարդիկ: Նրանք պետք է աշխատեն գիտենալ և կարողանալ վորքան հնարավոր է շատ և շատ: Դպրոցականները մրցակցում են իրար հետ լավ սովորելու համար: Յուրաքանչյուր դպրոցական աշխատում է իր գործը մյուսներից ավելի լավ կատարել: Բայց վերջացնելով իր աշխատանքը խորհրդային դպրոցականը պետք է ոգնի ընկերներին: Խորհրդային դպրոցականը կարդապահ է, նա համեստ է և քաղաքավարի:

2-րդ քեմա.— Պահպանիր սոցիալիստական սեփականությունը (4—5 դաս)

4-րդ դաս.— Առաջ Փարբիկաները, գործարանները, յերկաթուղիները, հողը պատկանում է յին թագավորին, կալվածատերերին և կապիտալիստներին: Այժմ մեր յերկրում այդ բոլորը պատկանում է աշխատավորներին: Հանրային սեփականությունը ստեղծել են աշխատավորները: Բանվորները և գյուղացիներն այդ բոլորը նվաճել են թշնամու դեմ վարած արյունահեղ պայքարում, դրա համար էլ նա սուրբ է և անձեռնմխելի:

Դասակարգային թշնամիները՝ կուլակները, վնասարարները խանգարում են սոցիալիստական շինարարությունը: Նրանք ձգտում են ապրել բանվորների և գյուղացիների հաշվին: Դասակարգային թշնամիները հաճախ սողոսկում են Փարբիկաները, գործարանները,

յերկաթուղիները, տրանսպորտը, կոլտնտեսութիւնները, խորհանտեսութիւնները, կոոպերատիւները և այնտեղ ամեն կերպ աշխատում են վնասել և թալանել խորհրդային բարիքը: (Բերել որինակներ թերթերից, դասական պրոցեսներից և այլն): Պետք է դիմակադերձանել դասակարգային թշնամիներին: Բոլոր աշխատավորների առաջնակարգ պարտականութիւնն է պահպանել և խնամել սոցիալիստական սեփականութիւնը:

Բանվորների և կոլտնտեսականների մեջ էլ դեռ կան առանձին մարդիկ, վորոնք ոգնում են դասակարգային թշնամիներին: Դա պարապուրդ տիպներն են, լողերն են, խորհրդային գույքին անխնամ վերաբերվող մարդիկ են, վորոնք այդ գույքը իրենցը չեն համարում, այլ համարում են «կազմակ»:

5-րդ դաս. — Դպրոցականը աչքի լույսի պես պետք է պահպանի հասարակական սեփականութիւնը: Նա պետք է մերկացնի բոլոր նրանց, ովքեր քաշում, տանում, գողանում, խժուռում, փշաղնում են հասարակական սեփականութիւնը, նա պետք է պահպանի հասարակական սեփականութիւնը (բերքի պահպանումը, կոլտնտեսութեան մատղանների խնամքի կազմակերպում և այլն): Պավլիկ Մորոզովը որինակ է բոլոր յերեխաների համար:

Դպրոցը և դպրոցական գույքը կառուցված և ձեռք է բերված բանվորների և գյուղացիների միջոցներով: Դպրոցականները պետք է խնամքով վերաբերվեն դրոշմաբանական գույքին (դպրոցական սեղան, նստարաններ, գրատախտակներ, ուսումնական պիտույքներ և այլն) վորպես հասարակական սեփականութիւն: Դպրոցականները պետք է խնամքով վերաբերվեն, ինչպես իրենց նույնպես և իրենց ընկերների գույքին:

3-րդ ԹԵՄԱ. — Պատրաստվիր քն հայրենիքի պաշտպանութեան համար (6--12 դաս)

6-րդ դաս. — Բանվորները և գյուղացիները հրացանը ձեռքներին նվաճեցին իրենց իշխանութիւնը:

Բերել աշխատավորների վարած պայքարից վառ պատկերներ, որինակներ Հոկտեմբերի որերից, Մայիսյան ապստամբութիւնից, քաղաքացիական կռիւներից և այլն: ԽՍՀՄ աշխարհում միակ յերկիրն է, վորտեղ կառուցվում է սոցիալիզմ: ԽՍՀՄ-ին ջերմորեն սիրում են ամբողջ աշխարհի աշխատավորները: Կապիտալիստական յերկրներում բանվորները և գյուղացիները ապրում են ծանր պայմաններում. բանվորները և գյուղացիները կապիտալիստների և կալվածատերերի կողմից շահագործվում, ճնշվում են: Կապիտալիստական յերկրներում աշխատավորների կյանքը միշտ վատթարանում է, ընկնում է աշխատավարձը, աճում է գործազրկութիւնը: Տասնյակ միլիոնավոր բանվորներ և գյուղացիներ ու նրանց յերեխաները սովի և աղքատութեան գիրկն են մատնված (բերել թերթերից կենդանի որինակներ):

ԽՍՀՄ որինակ է բոլոր յերկրների բանվորների և գյուղացիների համար իրենց շահագործողների՝ կապիտալիստների, կալվածատերերի դեմ վարած պայքարում: Կապիտալիստները և կալվածատերերը ատելով պատում են խորհուրդների յերկիրը:

7-րդ դաս. — ԽՍՀՄ ամբողջ աշխարհի աշխատավորների հայրենիքն է: Ամբողջ աշխարհի բուրժուազիան աշխատում է վոչնչացնել խորհուրդների յերկիրը. բուրժուազիան պատերազմ է պատրաստում մեր դեմ, բոլոր կապիտալիստական յերկրներում աճում է սպառազինումը: Մենք պատերազմ չենք ուղում: Մեր քաղաքականութիւնը խաղաղութեան քաղաքականութիւնն է:

8-րդ դաս. — 1929 թ. կապիտալիստները վորձեր արեցին մեզ քաշել կովի մեջ (ուսումնական հարձակում Ջին-Արևելյան յերկաթուղու վրա) Կարմիր բանակը արժանի հահահարված տվեց չինական գեներալներին: Վնասարարական կազմակերպութիւնների հայտնաբերումը ԽՍՀՄ-ում (Արդյունաբերական կուսակցութիւնը) պարզ կերպով ցույց տվեց կապիտալիստների պատ-

բաստուլթյունը. հարձակվելու ԽՍՀՄ-ի վրա: Կապիտալիստները վարկավորում են հակահեղափոխական զինուժյեվական-տրոցկիստական տականքներին և տեռորներ են կազմակերպում բանվոր դասակարգի լավագույն առաջնորդների դեմ: (Ընկ. Կիրովի սպանությունը): Մենք ամբացնում ենք մեր Կարմիր բանակը, վորպեսզի պատբաստ լինենք կապիտալիստական հարձակումներին հակահարված տալու:

9-րդ դաս.— Խորհրդային յերկրի բանվորները, գյուղացիները քաղաքացիական կռիվներում գրեթե անդեն, սոված, կիսամերկ, ջարդեցին սպիտակ բանդիտական զորամասերը, վորոնց սպառազինել էին կապիտալիստները լավագույն կերպով: Այժմ խորհուրդների յերկիրն ունի ամուր սպառազինված բանակ: Մենք ունենք մեր հրացանները և զնդացիները: Մենք ինքներս ենք պատրաստում հեռաձիգ թնդանութներ և տանկաներ: Մենք ինքներս ենք պատրաստում պերսպլաններ: Կարմիր բանակը ռադիոֆիկացիայի յե յենթարկված. Կարմիր բանակը և նավատորմիղը կարող են պաշտպանվել քիմիական հարձակումներից (տալ վառ որինակներ, պատկերներ, պատմվածքներ, բանաստեղծություններ մեր Կարմիր բանակի և նավատորմիղի մասին, կազմակերպել եքսկուրսիա դեպի Կարմիր բանակի տուն Յերևանում, Լենինականում): Մեր յերկրի պաշտպանունակության ամբասնդումը անքակտելիորեն կապված է ընկ. Ստալինի անվան հետ:

10-րդ դաս.— Կապիտալիստական բանակների զինվորները խաբված են կապիտալիստների կողմից, վորոնք կոչ են անում նրանց կռվել հանուն «հայրենիքի», հանուն «հավատի»:

Այնտեղ, վորտեղ իշխանության գլուխ են կանդնած կապիտալիստները, այդպիսի յերկիրը չի կարող լինել աշխատավորների հայրենիքը: Կարմիր բանակի մարտիկը զիտի թե ինչի համար նա պետք է կռվի: Նա կպաշտպանի իր իշխանությունը— բանվորների և գյուղացիները:

րի իշխանությունը (տալ Կարմիր բանակի հերոսներին ընութագրերից):

Կապիտալիստական յերկրներում բանակի հրամանատարները կապիտալիստները և կալվածատերերն են: Կարմիր բանակում հրամանատարները բանվորներից և կոլտնտեսականներից են: Հրամանատարը կարմիր բանակայինի առաջին ընկերն է: Կարմիր բանակայինը սիրում է իր հրամանատարին և միշտ պատրաստ է կյանքի զնով ազատել, յեթե նրան վտանգ է սպառնում: Կարմիր բանակի զեկավարն է Կլիմենտի Յեֆրեմովիչ Վորոշիլովը:

11-րդ դաս.— «Վոչ մի թիզ ուրիշներին հողից չենք ուզում, բայց մեր հողից վոչ մի վերչոկ չենք տալ ուրիշներին» (Ստալին): Կապիտալիստները պատերազմ են հրահրում իրենց ոգտի համար: Խորհուրդներին հարկավոր չե պատերազմը: Մենք կնքում ենք չհարձակվելու պայմանագրեր: Մեր յաղաղության քաղաքականությունը ունի մեծ հաջողություններ:

Աշխատավորները ԽՍՀՄ-ում պատրաստվում են պաշտպանվել: Կարմիր բանակը դաստիարակում է կռիված մարտիկներ: Միլիոնավոր աշխատավորներ «Պատրաստ աշխատանքի և պաշտպանության» շքանշանի քննություն են տալիս: Միլիոնավոր բանվորներ և գյուղացիներ սովորում են «Վորոշիլովյան» հրաձգության: Ոգաչունները սովորում են լավ թուչել, ձգտում են նմանվել խորհրդային յերկրի հերոս ողաչուններին: Շատերն են սովորում տիրապետել պարաշյուտին: Աճում է պլաներիստների կադրը: Հարձակման դեպքում բոլոր աշխատավորները վորպես մի մարդ, կկանգնեն իրենց հայրենիքի պաշտպանության համար: Բանվորները և գյուղացիներն ամբողջ աշխարհում պահպանում են խորհուրդների յերկիրը: Ամբողջ աշխարհի հեղափոխական բանվորները և գյուղացիները դուրս են գալիս ընդդեմ պատերազմի, հանուն ԽՍՀՄ-ի պաշտպանության:

12-րդ դաս. — Ապագան պատկանում է մանուկներին: Պատրաստվիր քո հայրենիքի պաշտպանութեան համար: Յերիտասարդ սերունդը պետք է լինի ել ավելի կազմակերպված, միաձուլված և կոփված, քան յեղել և հասակավոր սերունդը: Պատրաստվիր բանվոր դասակարգի գործի համար պայքարելու և հաղթելու: (Կազմակերպել Պաշտ-Ավիաքիմի բարեկամների բջիջ):

Գրականութիւն. — Հասարակագիտութեան դասագիրք 2-րդ մաս դ. 7, §§ 77-87: Համապատասխան հոդվածներ կարելի յե գտնել թերթերում, ամսագրերում: Կարմիր բանակի մասին հոդվածներ կարելի յե ընտրել «Կարմիր Զինվորից»: Սովորեցնել Կ. բանակի մասին վոտանավորները և յերգերը: («Փոքրիկ թմրկահարը», «Կռիվը-կռիվը սաստկանում է», «Իմ մատրոս տղա»):

4-րդ ԹԵՄԱ. — Խորհրդային յերկրի մանուկներն ամբողջ աշխարհի բոլոր ազգերի աշխատավորների յերեսխաների յեղբայրներն են (13—16 դասեր)

13-րդ դաս. — Յերկրի վրա ապրում են բազմաթիվ տարբեր ժողովուրդներ, վորոնք խոսում են տարբեր լեզուներով: Բոլոր յերկրներում, բացի ԽՍՀՄ-ից, իշխանութեան գլուխն են կանգնած կապիտալիստները: Ամբողջ աշխարհում բոլոր կապիտալիստների գործերն էլ միանման են: Նրանք շահագործում են աշխատավորներին: Աշխատավորների գործերն էլ միանման են — նրանք ձգտում են ազատվել կապիտալիստների ճնշումից, տապալել նրանց իշխանութեանը, ինչպես արեցին այդ մեր յերկրում, և կառուցել սոցիալիստական հասարակութեան, վորտեղ չի լինի մարդու ձեռքով մարդկանց ճնշում, կեղեքում: Բոլոր ազգութեաններն աշխատավորները յեղբայրներ են: Աշխատավորների լողունգն է. — «Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք»: Վորպեսզի բանվորներին և գյուղացիներին իրարից բաժանեն և թույլ չտան պայքարի համար միանալու կապի-

տալիստները պտելութեան են սերմանում նրանց մեջ, կապիտալիստները թշնամութեան են բորբոքում տարբեր ազգութեանների միջև:

14-րդ դաս. — Յարական Ռուսաստանը ժողովուրդների բանտ էր: Բազմաթիվ ազգութեանները ճնշվում էին ցարական կառավարութեան կողմից ամենավայրենի կերպով: Յարական կառավարութեանը թույլ չէր տալիս այդ ժողովուրդներին իրենց դպրոցներում դասավանդել մայրենի լեզվով, հրատարակել գրքեր, թերթեր և այլն:

Յարական կառավարութեանը թշնամացնում էր մի ժողովրդին մյուսի դեմ. կազմակերպում էր ջարդեր: Հատկապես հալածում էր հրեաներին, հայերին, թուրքերին և այլն:

Հոկտեմբերյան հեղափոխութեանը վերջ դրեց ազգային ճնշումներին: 169 ազգութեանների ժողովուրդները մարդկութեան պատմութեան մեջ առաջին անգամ հնարավորութեան ստացան պետութեան ղեկավարել, նոր կյանք կառուցել: Տարբեր ազգութեանների աշխատավորները միավորվեցին ԽՍՀՄ-ի մեջ:

Խորհրդային իշխանութեանը վոչնչացնում է ԽՍՀՄ ժողովուրդների տնտեսական և կուլտուրական հետամնացութեանը (որինակներ բերել առանձին ազգային հանրապետութեանների, չրջանների նվաճումներից): Հետամնաց ազգային չրջանները վեր են ածվում համատարած գրագիտութեան չրջանների: 2-րդ հնգամյակում վերջնականապես վոչնչանալու յե առաջներում հետամնաց չրջանների տնտեսական անհավասարութեանը:

15-րդ դաս. — Հեղափոխութեան մարտիկների ոգնութեան միջազգային ընկերութեանը՝ ՄՈՊԲ. — կապիտալիստները վախենում են ամբողջ աշխարհի աշխատավորների միութեանից: Ամբողջ աշխարհի բանվորների և գյուղացիների միասնական պայքարը հանուն հեղափոխութեան մարտիկների՝ Դիմիտրովի, Տանկովի և Պապովի ազատութեան համար հարկադրեց Գերմանիայի

կապիտալիստներին նրանց ազատել: Պայքար Տերմանի, Ռակոչիի ազատութեան համար: (Կազմակերպել պատանի մոպրականների ընկերութիւն):

16-րդ դաս.— Կապիտալիստական յերկրներում դպրոցը մի ազգութեան յերեխաներին սովորեցնում է ատել, արհամարհել մյուս ազգութիւնների յերեխաներին: Խորհրդային դպրոցը ինտերնացիոնալ դպրոց է: Խորհրդային յերեխաները ինտերնացիոնալիստներ են: Մեր դպրոցականները դիտեն, վոր բոլոր յերկրների աշխատավորները յեղբայրներ են, նրանք պետք է միահամուռ ուժերով պայքարեն իրենց թշնամիների դեմ: Խորհրդային դպրոցում պայքար է տարվում անցյալի մնացորդների՝ ազգային ատելութեան դեմ: Խորհրդային դպրոցականները կապ են պահպանում կապիտալիստական յերկրների աշխատավորների յերեխաների հետ և ոգնութիւն են ցույց տալիս նրանց:

5-ՐԴ ԹԵՄԱ.— Մարտիկների յերեք սերունդը— բանվոր դասակարգի գործի համար (17—23 դասեր)

17-րդ դաս.— Մեր յերկրի բանվորներն ու գյուղացիները կոմունիստական կուսակցութեան ղեկավարութեամբ տապալեցին կապիտալիստների իշխանութիւնը: Այդ կուսակցութիւնը հիմնել է ընկ. Լենինը: Կոմունիստական կուսակցութիւնը բանվոր դասակարգի լավագույն, առաջավոր մասն է: Կոմունիստական կուսակցութիւնը և նրա առաջնորդները Լենինն ու Ստալինը ղեկավարեցին Կարմիր բանակի պայքարը քաղաքացիական կռիւներում: Կոմունիստները գտնվում էին կռիւների ամենագեղարին և ամենավտանգավոր ճակատում (տալ Կարմիր բանակի հերոսական պայքարի պատկերներ, նկարագրել կոմունիստների դերն այդ կռիւներում, ինչպես որինակ— Լենինգրադի պաշտպանութեանը, հաղթանակները Յարիցինի (այժմյան Ստալինգրադ) ֆրոնտում, Պերեկոպի առումը և այլն):

Ստալինը, վորպես այդ հաղթանակները կազմա-

կերպող և ղեկավարող. կոմունիստները հերոսաբար մեռնում էին բանվոր դասակարգի գործի համար. Բազմի 26 կոմիսարները զնդակահարութիւնը, մայիսյան ապստամբութեան գոհերը:

18-րդ դաս.— Վերջացավ ռազմական ճակատը, սկսվեց աշխատանքի ճակատը: Վերականգնվում է քայքայված ժողովրդական տնտեսութիւնը: Կոմունիստները տնտեսական ճակատի առաջին շարքերում. նրանք կազմակերպում են մասսաներին: Կազմակերպում են կոմունիստական շարաթորյակներ: Լենինը շարաթորյակում: Կուսակցութեան ղեկավարութեամբ մեր յերկրում կառուցված են բազմաթիւ նոր գործարաններ, ֆաբրիկաներ, էլեկտրոկայաններ, փորվում են ջրանցքներ: Պատմել Դնեպրոստրոյի, Սպիտակ-Բալթիկ ծովերի ջրանցքի, Քանաքեռգեսի, Սևան-Չանգու կասկադի, Սարդարաբատի ջրանցքի մասին: Գյուղում կազմակերպված են կոլտնտեսութիւններ, խորհտնտեսութիւններ և ՄՏԿ-ներ:

Կոմունիստները գործարաններում, ֆաբրիկաներում, տրանսպորտում, խորհտնտեսութիւններում և կոլտնտեսութիւններում կազմակերպում են բանվորական և կոլտնտեսական մասսաներին և ղեկավարում են շինարարութիւնը: Խորհտնտեսութիւններում, ՄՏԿ-ներում, տրանսպորտում, կուսակցութիւնը կազմակերպեց քաղաքաժիններ: Քաղաքաժինները կատարեցին հսկայական աշխատանք, կոլտնտեսութիւնները դառան բոլշևիկյան, իսկ կոլտնտեսականները անվերադարձորեն բրոնեցին ունեւոր և կուլտուրական կյանքի ուղին: Հացի քարտերի վերացումը: Քաղաքաժինների վերակառուցումը: Կոմունիստները լավագույն հարվածայիններն են և սոցմրցակցութեան տարածողները մասսաների մեջ: Կոմունիստներն ունեն դիտակցական յերկաթյա կարգապահութիւն: Ամեն մի կոմունիստ պետք է սովորի: Կուսակցութեան համագումարներում բնորոշվում է Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտեն-

Համ Կ(բ)Կ ԿԿ, Համ կոմիտեի (բ) Կ կենտկոմը զե-
կազմավորում է սոցչինարարությունն ամբողջ յեր-
կրում: Համ. Կ(բ)Կ կենտկոմի գլխավոր քարտուղարն
է կուսակցության առաջնորդ ընկ: Ստալինը: Կոմու-
նիստական կուսակցություններ կան բոլոր կապիտա-
լիստական յերկրներում: Նրանք զեկազմավորում են բան-
վորների և գյուղացիների պայքարը կապիտալիստների
և կալվածատերերի դեմ: Ամբողջ աշխարհի կոմունիս-
տական կուսակցությունները միավորվում են կոմու-
նիստական ինտերնացիոնալում— Կոմինտերնում:

19-րդ դաս.— Լենինյան կուսակցության հավա-
տարիմ ոգնականն է Յերիտասարդության Կոմունիս-
տական Միությունը (կոմյերիտմիությունը): Կոմյե-
րիտմիությունը կրում է Լենինի անունը և հավատարիմ
է նրա ավանդներին: Քաղաքացիական կռիվներում
կոմյերիտմիությունը կուսակցության հետ միասին և
նրա զեկազմավորությամբ մղում էր հերոսական մարտեր:
Տալ կոմյերիտմիության պայքարի պատկերներ քաղա-
քացիական կռիվների շրջանից:

20-րդ դաս.— Կոմյերիտմիությունը սոցիալիս-
տական շինարարության առաջին շարքերում: Կոմյե-
րիտականները արտադրության մեջ լավագույն հար-
վածագիներն են: Պատմել Լենինի շքանշանով, Աշխա-
տանքային դրոշի շքանշանով պարգևատրված կոմյերի-
տականների մասին: Կոմյերիտմիությունը ամրացնում
է ԽՍՀՄ պաշտպանությունը ընդդեմ բոլոր յերկրների
կապիտալիստների հարձակումների: Կոմյերիտականնե-
րը «Վորոշիլովյան հրաձիգներ», «ՊԱՊ» նշանակիրներ,
լավագույն սպորտսմեններ և տուրիստներ են: Կոմյե-
րիտական ողջոցներ, պարաշյուտիստներ, պլաներիստ-
ներ: Կոմյերիտականները բեմեռային արշավին մաս-
նակիցներ: Չեյուսկինյան հերոս կոմյերիտականները:
Կոմյերիտմիությունը ծովային և ողային կարմիր նա-
վատորմի շեֆ:

Վարպետի կարողանալ տալ կուսակցության ար-

ժանավոր սոցիալիզմ կառուցող փոխարինողներ, կոմ-
յերիտմիությունը պայքար է մղում ուսման բարձր վո-
րակի համար: Կոմյերիտմիությունը խորհրդային դրպ-
բոցի շեֆն է: Կոմյերիտմիություն կա կապիտալիս-
տական բոլոր յերկրներում: Բոլոր յերկրների կոմյե-
րիտմիության պայքարն ու աշխատանքը զեկազմավորում
է Յերիտասարդության Կոմունիստական Ինտերնացիո-
նալը— ԿԻՄ-ը:

21-րդ դաս.— Պիոներները կոմյերիտականների սգ-
նականներն են ու փոխարինողները: Պատանի պիոներ-
ների կազմակերպության մեջ ընդունվում են աշխա-
տավորության զավակները: Պատանի պիոներները
կրում են Լենինի անունը: ԽՍՀՄ բոլոր պիոներական
ջտկատները կազմում են Լենինի անվան կոմունիստա-
կան պատանեկական կազմակերպությունը: Պիոներնե-
րի սալյուտը (վողջույնը) խաղ չէ— այլ յուրջ
գործ: Սալյուտ (վողջույնը) տալով պիոները ցույց է
տալիս, վոր նա կրում է պատանի պիոների պատվավոր
և բարձր կոչումը: Պատանի պիոներների լողունգն է—
«բանվորական գործի պայքարի համար յեղիք պատ-
րաստ»— պատասխանն է «միշտ պատրաստ»:

22-րդ դաս.— Ուսումնասիրվում են պատանի պիո-
ներների որենքներն ու սովորությունները:

23-րդ դաս.— Պիոներները բանավոր դասակարգի
գործի հավատարմության համար հանդիսավոր խոս-
տում են տալիս, նրանք ազնվությամբ իրազործում են
իրենց որենքներն ու սովորությունները: Յույց տալ
լավագույն պիոներների, իսկական լենինյանների
նակներ:

Պատանի պիոներներ կան համարյա բոլոր կապի-
տալիստական յերկրներում: Նրանք ողնում են իրենց
կոմունիստ հայրերին և մեծ յեղբայրներին— կոմյերի-
տականներին տապալելու կապիտալիստների լուծր: Տալ
արտասահմանյան պիոներների պայքարի պատկերներ:

(Ոգտազործել համապատասխան հատվածներ «Պիոններ Կանչից», «Ավանդարդից» և այլն):

6-րդ ԹԵՄԱ.— Խորհրդային յերկրի մանուկները նվիրված են Լենինի-Ստալինի գործին

24-րդ դաս.— Սոցիալիզմի ուղին ամբողջ աշխարհի բանվոր դասակարգի համառ և զժվար պայքարի ուղին է ընդդեմ ճնշողների: Այդ պայքարը ղեկավարում էր Վ.Ի. Լենինը: Պատմել Լենինի կյանքի և գործունեյության մասին: Լենինն իր ամբողջ կյանքը տվեց բանվոր դասակարգի գործին:

25-րդ դաս.— Լենինի հետ միասին բանվոր դասակարգի պայքարը ղեկավարում էր Յոսիֆ Վիսարիոնովիչ Ստալինը: Ստալինի ամբողջ կյանքը— համտո պայքար է բանվոր դասակարգի գործի համար: (Ուսումնասիրել ընկ. Ստալինի կենսագրությունը): Ստալինը ամբողջ աշխարհի բանվորների և գյուղացիների առաջնորդն է:

26-րդ դաս.— Խորհրդային յերկրի յերեսաները պետք է ձգտեն նմանվելու բանվոր դասակարգի առաջնորդներին— Լենինին և Ստալինին: Պատմության մեջ քիչ գեղքեր չեն հայտնի, յերբ պատանի հերոսներն իրենց կյանքը տվել են բանվոր դասակարգի գործին: (Գավրոշը— սպանված Փարիզի բարիկադներում, Մակսիմը, վոր ազատեց խորհրդային շոգենավը): Խորհրդային յերկրի մանուկները նվիրված են Լենինի—Ստալինի գործին:

27—28-րդ դաս.— Անցածի կրկնողություն:

Այստեղ ցույց տված գրականությունը վերաբերվում է միայն հասարակագիտության, բայց նա յերբեք չի սպառում ամբողջ նյութը: Ուսուցիչները բացի դասագրքից պետք է ոգտազործեն նյութեր մանկական աժոագրերից, թերթերից, դրքերից և այլն:

V ԴԱՍԱՐԱՆ

Հինգերորդ դասարանում հատուկ զննազիրք չվեներու պատճառով, ուսուցիչների համար առաջադրվում է Ստալինի «Լենինիզմի հարցերը», Կոմինտերնի ծրագրերը, Պոպովի դասագիրքը «Կուսպատմության ուրվագրծերը», Ինգուլով «Քաղզրագիտություն», Կարպինսկի «Լենինիզմի մասին», ԽՍՀՄ-ի խորհուրդների 7-րդ, ԱՍՖՍՀ-ի 7-րդ ու ՀՍՖՍՀ-ի 8-րդ համագումարների նյութերը:

5-րդ դասարանում անհրաժեշտ է աչակերտներին յուրացնել տալ հետեյալ խնդիրները.

- 1.— Խորհուրդներ:
 - 2.— ԽՍՀՄ բոլոր ազգությունների աշխատավորների յեղբայրական միությունն է:
- Ըստ դասերի նյութը պետք է դասավորել հետեյալ կերպ.

ԱՌԱՋԻՆ ԹԵՄԱ.— Խորհուրդներ (1—9 դաս)

1-ին դաս.— Ինչպես են առաջացել խորհուրդները:

2-րդ դաս.— «Խորհուրդներ, վորպես պրոլետարիատի ղեկատուրայի որգաններ»:

3-րդ դաս.— «Ովքեր իրավունք ունեն ընտրելու և ընտրվելու խորհուրդներում: Ինչ ձևով է կատարվում ընտրությունը»:

«Ովքեր են զրկված ընտրական իրավունքներից»:

«Խորհրդի անդամի պարտականությունը»:

4-րդ դաս.— Խորհուրդների միջոցով աշխատավորները ներգրավվում են յերկրի ղեկավարության գործում:

Բանվորուհիները և գեղջկուհիները խորհուրդներում:

5—7 դասեր.— Ինչպես է կառուցված խորհուրդների իշխանությունը:

Ինչպես է կառուցված ԱՍՖՍՀ:

8—9-րդ դասեր.— Հանրապետության ժողովրդա-

կան կոմիտարներ. լուսավորութեան ժողովրդական կոմիտարներ՝ [redacted], Հայաստանի լուսավորութեան ժողովրդական կոմիտար՝ Ա. Յեղիազարյան:

2-րդ ԹԵՄԱ.— ԽՍՀՄ բարձր աշխատավարձի գուրջուկների յեղբայրական միութեանը և (10—19 դասեր)

10-րդ դաս.— Յարական Ռուսաստանը հանդիսանում էր ժողովուրդների բանտ: Հոկտեմբերյան հեղափոխութեանը Ռուսաստանում վերջ տվեց ազգային ճնշումներին: Աղբյուրներ, Հայաստանի և Վրաստանի խորհրդայնացումը վերջ տվեց ազգային ճնշումներին Անդրկովկասում:

11-րդ դաս.— Ինչո՞ւ համար տարբեր ազգութեանների աշխատավորները միավորվեցին ԽՍՀՄ-ում և ԱՍՖՍՀ-ում:

12-րդ դաս.— Խորհրդային իշխանութեանը փոխել է ազգային շրջանների դեմքը:

13-րդ դաս.— Ինչպիսի հանրապետութեաններ են մտնում ԽՍՀՄ-ի մեջ (ՌՍՖՍՀ, ՌԻԿՍՍՀ, ԲՍՍՀ, ԹՍՍՀ, ՌԻՋՍՍՀ, ՏՍՍՀ, ԱՍՖՍՀ և բազմաթիվ ինքնավար հանրապետութեաններ ու շրջաններ (ԱՍՖՍՀ-ի մեջ մտնում են Ադ. ՍՖՍՀ (Նախիջևան և Լեռնային Ղարաբաղ), ՎՍՍՀ (Աբխազիա, Աջարիա, Ոսեթիա), ՀՍՍՀ:

14—15-րդ դասեր.— Բարձրագույն իշխանութեանը ԽՍՀՄ-ում Կենտրոնի, Ժողկոմխորհ, Կալինին, Մոլոտով: Բարձրագույն իշխանութեանը ԱՍՖՍՀ-ում Կենտրոնի, Ժողկոմխորհ. [redacted], Մուսարեկով:

Բարձրագույն իշխանութեանը ՀՍՍՀ-ում. ԿԳԿ, ԺԿՍ. Մարտիկյան, [redacted]:

16—17-րդ դասեր.— Միութեան ժողովրդական կոմիտարիատներ— Ծանր արդյունաբերութեան կոմիտարիատ, ԽՍՀՄ-ի Պաշտպանութեան ժողովրդական կոմիտարիատ. Որջոնիկիձե, Վորոճիլով:

18-րդ դաս.— Կապիտալիստական յերկրներում բանվորները և գյուղացիները խորհրդային իշխանութեան հաստատելու համար մղում են հերոսական պայքար:

19-րդ դաս.— Խորհուրդների ղեկավարում է կոմունիստական կուսակցութեանը:

20-րդ դաս.— Անցածի կրկնութեան:

VI ԴԱՍԱՐԱՆ

6-րդ դասարանում հասարակագիտութեան հատուկ դասագիրքը չլինելու պատճառով դասատուների համար առաջադրվում է՝ Ստալինի «Լենինից մի հարցերը», Ինգուլի «Քաղաքագիտութեան», Կարալինսկի «Լենինից մի հարցեր», Պոպովի «Համկոմկուսի պատմութեան ուրվագծերը» և ԽՍՀՄ-ի խորհուրդների 7-րդ, ԱՍՖՍՀ-ի 7-րդ ու ՀՍՍՀ 8-րդ համագումարների նյութերը:

6-րդ դասարանում անհրաժեշտ է յուրացնել տալ աշակերտներին խորհրդային սահմանադրութեան հիմունքներից հետևյալ հարցերը:

1-ին դաս.— Ուսմանը պետութեան մասին. Մարքս-Ենգելսը, Լենինը, Ստալինը պետութեան մասին:

2—4 դասեր.— Բուրժուական պետութեան: Կապիտալիստական յերկրներում դեմոկրատական ազատութեանը մասսաներին խաբելու գործիք է: Սոցիալ-ֆաշիստները իշխանութեան գլուխ: Փաշիզմը վորպես բուրժուազիայի դիկտատուրայի բացարձակ ձև:

5—7-րդ դասեր.— Պրոլետարական պետութեան: Պրոլետարիատի դիկտատուրան, վորպես անցողիկ շրջանի պետութեան. պրոլետարիատի դիկտատուրայի պետական ապարատը:

8—9-րդ դասեր.— Պրոլետարիատի դիկտատուրայի բարձրագույն սկզբունքն է— պահպանել պրոլետարիատի դաշինքը գյուղացիութեան հետ: Պայքար

դյուրացիութեան հարցում լենինյան քաղաքականու-
թեան համար:

10—14-րդ դասեր.— Խորհուրդները, վորպես պրո-
լետարական պետութեան ձև: Խորհուրդներ, վորպես
պետութեան նոր տիպ: Ինչպես ե կառուցված Խորհրդա-
յին պետութիւնը: Կուսակցութիւնը ե բանվոր դա-
սակարգի այլ կազմակերպութիւնները պրոլետարիա-
տի դիկտատուրայի սիստեմում:

15—16-րդ դասեր.— Պրոլետարական դիկտատու-
րայի յերկրի ազգային քաղաքականութիւնը: Պրոլե-
տարիատի դիկտատուրան վոչնչացրեց ժողովուրդների
անհավասարութիւնը: Խորհրդային իշխանութիւնը
փոխեց ազգային շրջանների դեմքը: Պայքար լենինյան
ազգային քաղաքականութեան համար:

17—18-րդ դասեր.— Պրոլետարիատի դիկտատու-
րայի խնդիրները 2-րդ հնգամյակում: 2-րդ հնգամյա-
կը, վորպես անդասակարգ սոցիալիստական, անդառա-
կարգ հասարակարգի կառուցման հնգամյակ: Խնդիր-
ները արդյունարեութեան բնագավառում: Խնդիրները
գյուղատնտեսութեան բնագավառում: Խնդիրները ժո-
ղովրդական լուսավորութեան բնագավառում: (Այս
հարցերը պետք ե լուսարանվեն կուսակցութեան 17-րդ
և ԽՍՀՄ-ի խորհուրդների 7-րդ համագումարների նյու-
թերով):

19—20-րդ դասեր.— Մարքսի, Ենգելսի, Լենինի,
Ստալինի ուսմունքը կուսակցութեան մասին: Կուսակ-
ցութիւնը վորպես բանվոր դասակարգի առաջավոր
ջոկատ: Կուսակցութիւնը վորպես բանվոր դասակարգի
կազմակերպիչ: Կուսակցութիւնը վորպես բանվոր դա-
սակարգի մարտական շտաբ: Կուսակցութիւնը վորպես
դասակարգային կազմակերպվածութեան բարձրագույն
ձևը: Կուսակցութիւնը վորպես պրոլետարիատի դիկ-
տատուրայի գործիք: Կուսակցութեան ինքնուրույնու-
թիւնը ե դասակարգային անհաշտելիութիւնը: Կու-
սակցութեան միասնութիւնը: Յերկաթյա կարգապա-

հուսթիւն ե ինքնաքննադատութիւն: Ում ե ինչպես ե
կուսակցութիւնը ընդունում իր շարքերը: Ինչպես ե
կառուցված կուսակցութիւնը: Ստալինը վորպես կո-
մունիստական կուսակցութեան ղեկավար:

24—25-րդ դասեր.— Կոմունիստական Ինտերնա-
ցիոնալ ե ԿԻՄ, Համ Կ(բ)Կ ե Կոմինտերն. Կոմինտերնի
նպատակը ե խնդիրները: Ինչպես ե կառուցված Կոմին-
տերնը: Ամբողջ աշխարհի կուսակցութիւնները պայ-
քարում են նրա համար, վորպեսզի ամբողջ յերկրա-
գնդի վրա հաստատեն խորհրդային իշխանութիւն:
ԿԻՄ-ը վորպես ամբողջ աշխարհի հեղափոխական յե-
րիտասարդութեան կոմունիստական միութիւն:

26—27-րդ դասեր.— Անցած նյութի կրկնութիւ-
նը:

Դասատուններն այս թեմաները մշակելիս պետք ե
հաղեցնեն նյութը կենդանի ե կոնկրետ բովանդակու-
թեամբ. այսպես որինակ՝ յերբ անցնում ենք «ինչպես
են առաջացել խորհուրդները» (տես 5-րդ դասարանի
1-ին դասը), անհրաժեշտ ե ոգտադործել զեղարկես-
տական պատմական նյութեր 1905 թվի հեղափոխու-
թեան ընթացքում բանվոր դասակարգի վարած պայ-
քարի ե այլն:

«Խորհուրդները, վորպես պրոլետարիատի դիկտա-
տուրայի որդաններ» (տես 2-րդ դաս) պետք ե յերե-
խաներին դասավանդլի գունեղ պատմվածքի ձևով կոն-
կրետ որինակներով:

«Խորհուրդների միջոցով աշխատավորները ներ-
դրավիում են յերկրի ղեկավարման գործում» թեման
անցնելիս (տես 4-րդ դաս), պետք ե յերեխաներին ծա-
նոթացնել խորհրդի սեկցիաների աշխատանքներին:
Բերել սեկցիաների աշխատանքների կոնկրետ ե վառ
պատկերներ. տալ խորհրդի անդամ կանանց աշխա-
տանքների վառ որինակներ:

Տալով հասկացողութիւն միութենական ե անդրը-
կովկասյան ժողովրդական կոմիսարիատների մասին.

պետք է նաև ցույց տալ թե մեզ մոտ Հայաստանում
ինչ կոմիսարիատներ կան. յերեխաներին ծանոթացնել
ժողովուհուսանների աշխատանքներին:

Ծանոթացնել յերեխաներին արդյունաբերության և
դուրդատնտեսության բնագավառում ձեռք բերած նվա-
ճումներին, ոգտագործելով Խորհուրդների Համամիու-
թենական 7-րդ, Անդրկովկասյան 7-րդ և Հայաստանի
8-րդ համագումարների նյութերը:

Ծանոթացնել յերեխաներին կուլտուրական Փրոն-
տում ձեռք բերած նվաճումներին. Հայաստանի մասին
ոգտագործել ընկ. Արտո Յեղիազարյանի զեկուցումը
տված խորհուրդների 8-րդ համագումարում:

Ցարական իշխանության, դաշնակցության և պրոլե-
տարական պետության ազգային քաղաքականությունն
անցնելիս պետք է ցույց տրվի յերեխաներին աշխատա-
վորության կյանքից վերցրած կենդանի պատկերներ
(«առաջ և հիմա»): Տույց տալ թե ինչպես ցարական
իշխանության ժամանակ ազգային փոքրամասնու-
թյունները ճնշվում հայածվում էին, ցույց տալ թե
ինչպես դաշնակցականները, մուսաֆաթականները և
մենչեիկները հրահրում էին ազգային ընդհարումներ,
կազմակերպում էին ազգային կոտորածներ, սրսկում
էին ազգային ատելություն և անասնական շովինիզմ:

Տույց տալ թե ինչպես պրոլետարական պետու-
թյունը հոգատար վերաբերմունք է ցույց տալիս ազ-
գային փոքրամասնություններին, զարգացնում է ար-
դյունաբերությունը՝ վերակառուցում դուրդատնտե-
սությունը, բարձրացնում կուլտուրական մակարդակը
և այլն: (Ոգտագործել Համամիութենական Խորհուրդ-
ների 7-րդ և հարվածային կոլտնտեսականների 2-րդ
համագումարների նյութերը): Գիրք չունեցողներին
համար (քրդեր, նենեցներ) ստեղծում է գիր և դրակա-
նություն, բացում է դպրոցներ, պատրաստում կազրեր
և այլն: «Պայքար ամբողջ աշխարհում խորհրդային
իշխանություն հաստատելու» թեմայում պետք է ցույց

տրվի չինական Կ. բանակի, կապիտալիստական այլ
յերկրների պրոլետարիատի հեղափոխական պայքարի
եպիզոդների վառ որինակների վրա: (Դեպքերը Վեն-
նայում, Իսպանիայում և այլն):

«Համամիութենական կոմունիստական կուսակցու-
թյունը» պետք է տրվի յերեխաներին պատմվածքի
ձևով՝ անհրաժեշտ է ոգտագործել կոմունիստների վա-
րած պայքարի առանձին եպիզոդներ: (Լայնորեն պետք
է ոգտագործել իլյուստրատիվ նյութերը, քարտեզներ,
դիագրամներ, սխեմաներ և այլն): Անհրաժեշտ է
ոգտագործել ԽՍՀՄ-ի կառուցվածքի սխեման, յերե-
խաները տետրակներում պետք է նկարեն խորհրդային
իշխանության կառուցվածքը: Վոր հանրապետու-
թյուններն են մտնում ԽՍՀՄ-ի և ԱՍՖՍՀ-ի մեջ թե-
մաները ուսումնասիրելիս պետք է լայնորեն ոգտագոր-
ծել քարտեզ: Դասի ժամանակ պետք է տալ առանձին
պատկերներ ԽՍՀՄ-ի ժողովուրդների կյանքից:

Այն բոլորը, ինչ վոր ասվեց 5-րդ դասարանի նյու-
թերի նկատմամբ վոչ պակաս չափով վերաբերվում է
նաև 6-րդ դասարանին: 6-րդ դասարանի համար նա-
խատեսված նյութերը վոչ միշտ մատչելի յեն աշա-
կերտներին. դրա համար էլ ուսուցիչը այս նյութերը
պետք է աշակերտներին տա պատմվածքի ձևով կամ
կենդանի զրույցի միջոցով:

VII ԴԱՍԱՐԱՆ

7-րդ դասարանում պետք է ուսումնասիրել Մարք-
սի, Ենգելսի, Լենինի և Ստալինի կենսագրությունը: Այս
կենսագրությունների կապակցությամբ աշակերտու-
թյունը պետք է ստանա տարրական տեղեկություններ
կուսակցության պատմության և բանվորական շարժ-
ման մասին:

7-րդ դասարանի համար պետք է ոգտագործել Ով-
սյանիկովի և Լեվիտանի հասարակագիտության դասա-
գիրքը 3-րդ մաս (ուսման 5-րդ տարի):

Դատազրքից պետք է հանել վորպես յերեխաների համար անմատչելի Մարքսին, Ենգելսին վերաբերյալ նյութերը. Մարքս-Ենգելսի մասին ուսուցիչը պատմվածքի ձևով 2 ժամվա ընթացքում պետք է ծանոթացնի աշակերտներին նրանց կյանքին և գործունեյությանը: Լենինի և Ստալինի կյանքին ու գործունեյության վերաբերող նյութը պետք է թեթևացնել, հանելով դատազրքից հետևյալ բաժինները, վորպես աշակերտների համար անմատչելի:

Լենինը բարձրացրեց Մարքսի-Ենգելսի դրոշը (§. 19, էջ 62—71): Պայքար նարոդնիկների և եկոնոմիստների դեմ (§. 23, էջ 87, 88, §. 24, էջ 90—91, §. 25, էջ 95), պայքար լիկվիդատորության դեմ (§. 28, էջ 109): §§. 18, 39, 42, 43, 44, 45, 46, 47 պետք է յերեխաներին տրվի պատմվածքի կամ կենդանի գրույցի ձևով:

Ըստ դասերի նյութը պետք է ուսումնասիրել հետևյալ կերպ.

1 դաս. Մարքս—նրա կյանքը և գործունեյությունը:

2 դաս. Ենգելս— նրա կյանքը և գործունեյությունը:

2-րդ թեմա.— Վ. Ի. Լենին Յեվ Ի. Վ. ՍՏԱԼԻՆ

3-րդ դաս.— Ինչ էր իրենից ներկայացնում Ռուսաստանը 21-րդ դարի:

§. 20. 70—80 թ.թ., յերբ ծնվեց Լենինը:

4-րդ դաս.— § 21. Լենինի մանկական և պատանեկական տարիները:

5-րդ դաս.— § 22, 23 Լենինը Պետերբուրգում: Պետերբուրգի բանվոր դասակարգի ազատագ. միության կազմակերպումը:

6-րդ դաս.— § 24. Ձերբակալություն, բանտ, աքսոր: Արտասահման անցնելը:

7-րդ դաս.— § 25—26: Կուսակցության 2-րդ համագումարի նախապատրաստումը:

2-րդ համագումար, պառակտում. Լենինի նամակը Ստալինին (տես § 41):

8-րդ դաս.— § 27. Լենինը և 1905 թ. հեղափոխությունը: Հանդիպում Ստալինի հետ (տես §. 41):

9-րդ դաս.— §. 28, 29. Ռեակցիայի և նոր վերելքի տարիներ: Իմպերիալիստական պատերազմը:

10-րդ դաս.— § 30. Փետրվարյան հեղափոխությունը: Լենինի վերադարձը արտասահմանից: Հուլիսյան որեր: Լենինը վորպես Հոկտեմբերի նախապատրաստման ղեկավար:

11-րդ դաս.— § 31. Լենինի լավագույն զինակից Ստալինը անմիջապես ղեկավարում է ապստամբությունը (տես § 41):

12-րդ դաս.— § 32, 33 Հոկտեմբերյան հեղափոխությունը և կուսակցության առաջնորդներ Լենին, Ստալին (տես § 41):

13-րդ դաս.— § 32 42 քաղաքացիական պատերազմ: Լենինը հանրապետության պաշտպանության ղեկավար: Ստալինը անմիջապես ղեկավարում է պաշտպանության ճակատի ամենավտանգավոր մասերը:

14-րդ դաս.— § 35. քաղաքացիական պատերազմից ղեկի սոցիալիստական շինարարություն:

15-րդ դաս.— § 36. Լենինը յերիտասարդության խնդիրների և դպրոցի մասին: (Պարտավորեցնել աշակերտներին, վորպեսզի նրանք կարգան Լենինի ճառը արտասանած յերիտասարդության 3-րդ համագումարում):

16-րդ դաս.— § 37, 38, Լենինի կյանքի վերջին տարիները: Լենինը վորպես հեղափոխական և վորպես մարդ:

17-րդ դաս.— Ձրույց հետևյալ թեմայի շուրջը.

Լենինը վերականգնեց և լրացրեց Մարքսի-Էնգելսի ուսմունքը:

18-րդ դաս.— § 40, Լենինի պատգամները:

19-րդ դաս.— § 41. Ստալինը Լենինի լավագույն աշակերտը և զինակիցն է: (Ստալինի կենսագրության համառոտ կրկնությունը):

20-րդ դաս.— §§ 42, 43. Ստալինը և Կարմիր բանակը: Ստալինը և ազգային հարցը: (Կենդանի պատմվածք և զրույց հետևյալ թեմայի շուրջը. «Ստալինը և յերկրի ինդուստրացումը»):

21-րդ դաս.— Կենդանի պատմվածք և զրույց հետևյալ թեմայի շուրջը: Ստալինը և գյուղատնտեսության կուլեկտիվացումը:

22-րդ դաս.— § 46. Ստալինը և կուլտուրական շինարարությունը:

23-րդ դաս.— Կենդանի պատմվածք և զրույց հետևյալ թեմայի շուրջը: Ստալինը կոմունիստական կուսակցության և կոմունիստների առաջնորդն է:

20—23-րդ դասերը պետք է կառուցված լինեն Համկոմկուսի 17-րդ կուսհամագումարի նյութերի վրա:



ԳԻՆԸ 60 407

«Ազգային գրադարան»



NL0188397